

նոյնպէս պահանջում է ոչ թէ ուղիղ, այլ առարկայական սեռականով խնդիր. «ճշմարտութեանն յաղթող», «զծնողն յուր», «րոք իմ» (Մ. Մինասեան, *Դասական հայերէնի նկարագրական քերականութիւն*, Ժնեւ, 1996, էջ 225):

29 «Նիկիական» կանոնները բաղկացած են եօթ կանոնախմբից (Անկիրայի, Նիկիայի, «Վեսարիայի», Նեոկեսարիայի, Անտիոքի, Գանգրայի, Լաոդիկէի) եւ կազմում են *Կանոնագրքի* ամենավաղ եւ բնական է, դասական թարգմանական շերտը, իսկ Սարդիկէի ժողովի կանոնախմբը միակ կանոնախմբն է, որի թարգմանութիւնը բնորոշում է որպէս յունաբան:

30 F. Lauchert, *Աջ. հրատ.*

31 Նոյն տեղում:

32 Մատթ. Ա, Բ փոխաներում պարագայի առումով կիրառուած դերբային չորս անգամ համապատասխանում է հիմնական բային համադաս. «եւ» շաղկապով կապակցուած դիմաւոր բայը (հմմտ. «դարձան եւ ասեմ» - ἀπέστρεψαν... λέγοντες (Յովն. Գ 9), նաեւ երեք անգամ՝ առանց շաղկապի), եօթ անգամ՝ ժամանակի կամ պատճառի երկրորդական անխաղաղութիւնը, սակայն եւ եօթ անգամ՝ անցեալ դերբայը:

33 Հմմտ. որոշ չի առումով կիրառուած դերբայի ընկալումը որպէս պարագայի առումով կիրառութիւն Աստուածաշնչում՝ «եւ եղեւ բան տեսոն առ Յովնան երկրորդ անգամ եւ ասէ» - Καὶ ἐγένετο λόγος κυρίου πρὸς Ἰωάνν ἐκ δευτέρου λέγων (Յովն. Գ 1):

34 Որոշ չի առումով կիրառուած յունարէն դերբայի

դիմաց անորոշ դերբայի գործիական հոլովը կիրառուել է եւ այլ թարգմանութիւններում՝ Դիոնիսիոս Թրակացու *Քերականութեան մէջ*՝ «անուն է մասն բանի հոլովական մարմին կամ իր նշանակելով» - ὄνομα ἐστὶ μέρος λόγου πτωτικὸν σῶμα ἢ πρᾶγμα σημαῖνον (H. Adoni, *Աջ. աշխ.*, էջ 12. 22), *Պիտոյից գրքում* «Երաւ է բան բացասութեամբ գլխաւորեալ յորորելով յինչ կամ հրաժարեցուցանելով» (*Գիրք պիտոյից*, Երեւան, 1993, էջ 44. 3-4, հմմտ. նաեւ էջ 269, ծմբ. 3) - Γνώμη ἐστὶ λόγος ἐν ἀποφάσει κεφαλαϊώδης ἐπὶ τὶ προτρέπων ἢ ἀποτρέπων (Aphthonii Progymnasmata, Ch. Walz, *Rhetores Graeci*, vol. I, Stuttgartiae, 1832, p. 67), «Արտասանութիւն է բան պատմական ի դէմս ածելով երեւելապէս գլխունեալն» (անդ, էջ 201. 3-4) - Ἐκφρασις ἐστὶ λόγος περιηγηματικὸς ὑπὸ ὅσιν ἄγων ἐναργῶς τὸ δηλοῦμενον (անդ, էջ 103.8): Բերուած օրինակներում, թում է, անորոշ դերբայի գործիական հոլովն օժտուել է իրեն ոչ հատուկ որոշ չի առումով: Գուցէ նման մեկնաբանութիւն կարելի է տալ եւ Տիմոթէոսի նշուած օրինակներին:

35 Վերջին օրինակի համար հմմտ. Գ. Մուրադեան, *Աջ. աշխ.*, էջ 108 (տե՛ս ծմբ. 1):

36 Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, էջ 155.5:

37 Կորին, Վարք Մաշտոցի, բնագիրը եւ թարգմանութիւնը Մ. Արեղեանի, Երեւան, 1941, էջ 28:

38 Jos J. S. Weitenberg, "Linguistic Continuity in Armenian Hellenizing Texts", *Le Muséon*, t. 110, fasc. 3-4, 1997, pp. 447-458.

### ԱՍՈՐԵՐԷՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ ՈՐՈՇ ԳՈՐԾԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ ԼԱԻՐԵՆՏԻ ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ

#### «ՎԿԱՅՔ ԱՐԵՒԵԼԻՑ»

Հայ առաջին թարգմանութիւնները կատարուել են ասորերէնից: Գրերի գիւտից յետոյ թարգմանչական բնագաւառում այս գերապատուութիւնը պատահաբար կանխապես չէր հայտնուած է Հայ երկրականութեան մէջ Ասորական Գեղեղեցու դպրութեան ունեցած դերով ու ազդեցութեամբ՝ մի բան, որ V դարի սկզբին ցայտուն ու ակնյայտ էր, քան յունական համապատասխան ոլորտի ազդեցութիւնը:

Ասորական թարգմանութիւնների գերակշիռ մասը կատարուել է V դարի առաջին կեսին: Թարգմանութիւնները բովանդակային առումով գերազանցապէս սորերէնից թարգմանուել են նաեւ այնուհետեւից թարգմանուել են թարգալիսի գործեր, որոնք ասորերէն են թարգմանուած եղել այլ լեզուներից՝ յատկապէս շրջանից իսկ գործել է ոչ թէ պատահականութեան, այլ նպատակաւոր դրուածութեան սկզբունքը:

Բնականաբար, հնարաւոր է ինչպէս անդրադառնալ ասորական բոլոր թարգմանութիւններին. դրա կարիքը թերեւս չկայ էր քանի որ այդ թարգմանութիւնները բաւարարեցին քերականական աւելի շատ ընդհանրութիւններ են դրսեւորում, քան տարբերութիւնները:

Կ'անդրադառնանք հիմնականում այն գործերին, որոնց բառապաշարը ուղղակի է բառային (չբառարանագրութեամբ) վկայութիւններին, նոր բառիմաստների բառակազմական ուղղաբար երեւոյթների եւ այլ իրողութիւնների տեսակէտից:

«Վկայք Արեւելիցը» ասորերէնից թարգմանուած սրբախօսական երկերի ժողովածու է, որը նուիրուած է պարսից քրիստոնեաների, այսպէս կոչուած, մեծ հալածանքների նկարագրութեանը:

Ժողովածուն հայերէն է թարգմանուել 454-464 թթ. այն թարգմանել է Աբրահամ Խոստովանողը: Վերջինիս կենսագրական տեղեկութիւնների մանրամասները յայտնի չեն: Ենթադրուում է, որ ծնուած պէտք է լինի IV դարի 60-ական թթ.: Ամենայն հաւանականութեամբ եղել է Սահակ-Մեսրոպի առաջին աշակերտներից, որոնք կանոնաւոր կրթութիւն են ստացել՝ խորանալով կամ ասորերէնի կամ յունարէնի մէջ:

Քննական բնագիրը հրատարակել է մեծանուն բանասէր Գալուստ Տէր-Մկրտչեանը («Աբրահամ Խոստովանողի վկայք արեւելից». թարգմանութիւնը յատկապէս՝ աշխատասիրութեամբ Գալուստ Տէր-Մկրտչեանի, էջմիածին, 1897-1900/1921): Հայ բանասիրութիւնը համաձայնորէն անդրադարձել է այդ երկին: Գիրքը յատուկ քննութեան է արժանացել նաեւ ասորագէտ Լ. Տէր-Պետրոսեանի կողմից (Լ. Տէր-Պետրոսեան, 1976): «Վկայք» Հայ թարգմանական գրականութեան լաւագոյն նմուշներից մէկն է. «այն աչքի է ընկնում այնպիսի հարուստ լեզուով, գունեղ ոճով եւ սահուն շարադրանքով, որ եթէ չլինէին առանձին ասորաբանութիւնները, կարելի է ենթադրել, թէ գործ ունենք որեւէ Հայ հեղինակի ինքնուրոյն երկասիրութեան հետ» (Լ. Տէր-Պետրոսեան, 1976, 73):

Անշուշտ, երկի այս արժանիքը մեծապես պայմանաւորուած է նախ՝ թարգմանչի անհատական կարողութիւններով, օտարալեզու երկի ոչ միայն բովանդակային, այլև լեզուական առանձնայատկութիւնների ընկալման ունակութեամբ, ապա նաև՝ V դարի, յատկապէս մինչև վերջին քառորդի գրական-թարգմանական այն ակնյայտ ուղղութեամբ, որի նպատակը պարզ, անպաճոյճ շարադրանքն էր, գրուածը ընթերցողին մատչելի դարձնելը: Թարգմանիչները ջանում էին, հարազատ մնալով բնագրի նիւթին ու արտայայտուած մտքին, դրանք ներկայացնել հայեցի: Լ. Տէր-Պետրոսեանը այս գրքի թարգմանական առանձնայատկութիւնները ամփոփում է 10 յատկանիշներով: Նշենք մի քանիսը՝ ա) մակդիրների յաւելումներ (մակդիրների առատ գործածութիւնը ուսումնասիրողները համարում են, այսպէս կոչուած, ոսկեղարեան հայերէնի առանձնայատկութիւններից մէկը). բ) այլ կարգի յաւելումներ. գ) յաւելումներ աստուածաշնչեան մէջբերումների ճշգրտման, լրացման եւ նրանց որոշակի աղբիւրների վկայակոչման նպատակով. դ) փոփոխութիւններ, որոնք կատարուած են ժողովածուի բովանդակութեան տեղայնացման մղումներով. ե) բնագրի լեզուի իւրայատկութիւնների հետ կապուած կան նաև այլ կարգի ոճական առանձնայատկութիւններ, օրինակ, ասորերէն šarīra'īt բառը կարելի է թարգմանել ե՛լ «ճշմարիտ» ե՛լ «հաստատ, ամուր»: Այդ պատճառով հետեւեալ նախադասութեան մէջ հայ թարգմանիչը տալիս է այդ երկու նշանակութիւնն էլ՝ «ճշմարիտ եւ հաստատութեամբ ունիմ» սկզբնագրի՝ «հաստատութեամբ ունիմ»-ի փոխարէն (Լ. Տէր-Պետրոսեան, 83):

Բնականաբար, այս գործում կան

նաև որոշ ստորաբանութիւններ, որոնք չեն ստուերում թարգմանութեան արժանիքները:

Թարգմանութեան լեզուն պարզ է, երկարաշունչ նախադասութիւններից ու ճոռոմաբանութիւններից զերծ: Ահա մի հատուած, որ ընդհանրապէս բնութագրական է Աբրահամ Խոստովանողի ոճին. «Չիք ոք, որ զղջացաւ եւ դարձեալ ի չարեաց: Չիք ոք, որ կազի ընդ ագահութեան, եւ ոչ՝ որ դատ եղեալ կռուի ընդ ապիրատութեան: Չիք ոք, որ ճնշէ զցասումն եւ ոչ՝ որ սաստէ ի կագ եւ խափանէ: Չիք ոք, որ ցածուցանէ զհակառակութիւն եւ ոչ՝ որ մեղմացուցանէ զատելութիւն» (44): Ահա մէկ այլ հատուած. «Նմանեցուցանեմք զմահս մեր քում մահուն եւ զչարչարանս մեր չարչարանաց քոց եւ զարիւն մեր արեանդ, որ բղխեաց ի կողիցդ: Ուստի եւ կամեսցի հեղուլ զարիւնս մեր սուրն անօրէն՝ աւգտակար է մեզ: Եթէ զկողս խոցիցէ՝ քում կողիդ, որ խոցեցաւ գեղարդեամբն, նմանեմք...» (77-78):

Գրքի որոշ հատուածներ երկխօսութիւններ են: Թարգմանիչը մէջբերուող խօսքին պարզութիւն, անմիջականութիւն է հաղորդում ոչ միայն առօրեայ, գործածական բառերի կիրառութեամբ, այլև քերականական այլեայլ միջոցներով: Ուրիշի խօսքից առաջ սովորաբար օգտագործում է ասեմ բայը ներկայ ժամանակով (պատմական ներկայ), խօսքի մէջ յաճախական են ժամանակների երկրորդական կիրառութիւնները, յատկապէս՝ ներկայ ժամանակածեւի՝ ապառնու իմաստով գործածելը: Հմմտ.

-Արքայ ասէ ... ես զուսումնակիցս քո զարհուրեցուցանեմ դառն մահու, զոր ածեմ ի վերայ քո, եւ առնեն զկամս իմ ի հարկէ եւ ապրին:

-Շմաւոն ասէ ... եւ զայս գիտասլիք,

արքայ, զի ընդ քո ընդ անուանեալ եւ ընդ անցաւոր թագաւորիդ զմեծ անունն, որ կայ իր վերայ մեր, ոչ կարեմք փոխանակել, այսինքն է Յիսուս Քրիստոսի Տեառն մերոյ:

-Արքայ ասէ. եղծանեմ, ապականեմ զգեղդ քո ցանկալի եւ յարիւն յապաժոյժ թաթաւեմ զհասակդ գեղեցիկ հուպ ընդ հուպ կարճ ի կարճոյ ի վաղուեան ժամանակի, եթէ ոչ արասցես ինձ պատիւ առաջի իշխանացս իմոց պատուականաց եւ պագանիցես երկիր ինձ եւ արեգականն աստուծոյն Արեւելից (119-120):

Նկատելի է նաև ոճական մի առանձնայատկութիւն եւս. կոչականի սովորական ով+անձ կազմութեանը զուգահեռ իմաստովանողը օգտագործում է եւ այլ՝ իմաստովանողը օգտագործում է նշանակույթային արհամարհական նշանակույթով: Երբ պարսից արքան դիմում է Գոշթաղին (վերջինիս քրիստոնեայ լինելը բացայայտուելուց յետոյ), ասում է՝ ա՛յ մահապարտ... (124): Ահա հեղինակի խօսքը՝ ուղղուած Շմաւոնին.

-Ո՛վ Շմաւոն, որսորդ, որ որսացաւ զաստուածեղէն որսն ի մահուան իւրում (127):

Իհարկէ, այս օրինակափութիւնը բացարձակ չէ (հմմտ.՝ ասէ ցնա արքայ. եւ արդ մահ խնդրես փոխանակ պատուին, զոր առէր, ո՛վ խելայեղ), այնուհանդերձ, զոր առէր, ո՛վ խելայեղ, այնուհանդերձ կոչականի նման արտայայտութիւնները պէտք է դիտել որպէս ոճական առանձնայատկութիւն:

Ժողովրդախօսակցական երանգ են տալիս նաև -աւոր- ածանցով բազմաթիւ բառերի յաճախական կիրառութիւնները. «Ո՛ւր էին արդեօք գունդք վահանաւորք, վաղարարք, տիգաւորք, աշտեճաւորք ... մի գակաւոր, կապարճաւոր...» (71):

«Ո՛վ քահանայ պատերազմող, նիւրա դաւոր, եւ զրահաւոր» (102): «Էր նորա դուստր մի հաւատաւոր...» (140): «...յո-

րում ոչինչ գտանեն ոռնաւորք եւ մրճաւորք» (66): Նկատենք, որ ընդգծուած բառերի մի մասը ՆՀԲ-ն բերում է որպէս առաջին կամ միակ վկայութիւն:

Յաճախ թարգմանիչը մի բառի փոխարէն կիրառում է կապակցութիւն՝ յարադրութիւն, որն, անշուշտ, խօսակցական լեզուի նրբերանգ է: «Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ քո պահանջեմ հրեշտակք» (194-195): «Հասիմ բանքս յարքայ» (150): «Եթէ ոչ դառնաս ի խորհրդոյ անտի եւ ի բաց թողուս սուգ քո հրաման տամ...» (160): Երբ մոգպետը այրի Եզանդուխտին անպարկեշտ առաջարկութիւն է անում, վերջինս պատասխանում է. «Ձի այր իմ մեռաւ, եւ ես այրի մնացի, յա՞յն տեղի հասի, մինչեւ առ քեզ, պի՛ղծ շուն, մի խոնարհեցուցի, զպատիւ իւր...» (160):

«Վկայքում» հայ մատենագրութեան մէջ թերեւս առաջին անգամ կիրառուած են լատինական ամսանունները: Դրանք առկայում են ոչ թէ գրքի բոլոր հատուածներում, այլ միայն՝ «Վկայութիւնք բազմաց մարտիրոսաց, որք ի Պարսս կատարեցան» վերնագրով առաջաբանում: «Գոշթաղդ, որ է Գոնճասպ նախարար, վկայեաց ի մեծի հինգշաբթուոյ Ջատիկն ի ԺԳ ապրիլի ամսոյ» (2): «Վկայեաց եւ քեռորդին Շմաւոնի մեծի ի Ժ յունիս ամսոյ» (3):

ՆՀԲ-ն ունի հոռոմէական ամսանունների անուանումները՝ յղելով Յայսմաւուրքները եւ Տօնականները, որոնք, պարզ է, բաւական ուշ շրջանի վկայութիւններ են: Որոշ ամսանունների դէպքում յղում է Եւսեբիոսի «Քրոնիկոնը», որտեղ, սակայն, լատիներէն ամսանունների թուարկումն է, եւ ոչ թէ հայերէնում նրանց կիրառութեան նմուշ: Յայտնի է, որ հոռոմէական ամսանունները հայ գրականութեան մէջ տարածում են գտել IX-X դարերից՝ առաջին Յայսմաւուրքներում:

րի կազմմանը զուգընթաց: Ինչ վերաբերում է «Վկայքի» օրինակներին, ապա այս հատուածի հինգերորդաբան լինելու իսկութիւնը ուսումնասիրողները կսկածելի են համարում, ընդ որում այլևայլ փաստարկների հետ նշում են նաև հոռոմէական ամսանունների առկայութիւնը:

Չվիճելով այս հարցի շուրջ՝ նկատենք հետեւեալը: Իրօք, հին մատենագրութեան մէջ, որպէս կանոն, գործածուել են հայկական ամսանունները: Բայց դեռևս V դարից ընդունուած էր օտար լեզուներով լեզուները (եբրայական, ասորական, իրանական...): Այսպիսի օրինակներ կարող ենք բերել և՛ հինգերորդաբան շրջանից: Մ. Կաղանկատուացու «Պատմութեան» մէջ նոյնպէս դէպքերի ժամանակային նկարագրութիւնները կատարուում են հիմնականում հայկական ամսանուններով, բայց երբ հեղինակը արծարծում է մահմեդականութեան հարցերը ու Մուհամեդի գործունէութիւնը, կիրառում է արաբական ամսանուններ (III Գիրք, Ա), («...և անտի ել յայն շահաստան, որ այժմ կոչի իւր անուն Մահմետայ յամսեանն սափար» (Կղնկ. 1983, 290): «Յամսեանն շահր ուբբի... թափեաց զգմբէթն... ի ռամազան ամսոյ» (ն. տ.): «Ի շաւաղ ամսոյ ժե կուտեցաւ Բեփ պարսկի...» (ն. տ.):

Գրքի մէկ այլ հատուածում (էջ 314-315) հրեաների մասին խօսելիս բերում է հրէական ամսանուններ. «Մովսէս տօնս կարգեաց իսրայէլացւոցն յօթներորդում ամսեանն, որ է թշրին առաջին օրն...» (314): Այստեղ բերում են նաև այդ ամիսների հոռոմէական զուգահեռները. «Ի թշրին ամսոյ քսան եւ երկուսն լինի ըստ հոռոմին Ռոկտեմբեր ամսոյ ինն: Արդ՝ ի տասնէն յառաջ սկսանիմք ընդ զվեց ա-

միսն եւ լինի յայրիլի եօթանն, ըստ հրեշտակին, թէ այս վեցերորդ ամիս է նորա, եբրայեցւոցն Գիսանի ի տասն եւ եօթանն աւետիք կուսին» (315):

Ինչ վերաբերում է «Վկայքի» նշուած հատուածին, ապա այստեղ էլ կարելի է «տեղայնացման» միտում տեսնել: Հատուածը վերաբերում է Շապուհ արքայի բռնութիւններն այն պարսիկների նկատմամբ, ովքեր Կոստանդիանոս կայսեր հրամանով մասնակցել են Երուսաղէմի եկեղեցու կառուցմանը: Հաւանօրէն այդ իրադարձութիւնը հեղինակը (թարգմանիչը) դիտել է որպէս բիւզանդական իրողութիւն՝ օգտագործելով հոռոմէական ամսանունները: Սա, իհարկէ, ենթադրութիւն է, գուցէ եւ՝ մերժելի: Յամենայնդէպս, անկախ «Վկայքի» այդ հատուածի ժամանակագրային բնոյթից (որի պարզումը աւելի շատ բանասիրական հարց է), հոռոմէական ամսանունների առաջին վկայութեան փաստն ինքնին հետաքրքրական է, եւ պէտք է նշուի որպէս գրքի բառապաշարային իւրայատկութիւններից մէկը:

Հետեւեալ բառերը մեր մատենագրութեան մէջ թերեւս առաջին վկայութիւններն են. դաշտայարկ (180), դառնածնր (209), գայլիկոն (29), եփոռաւոր (102), կապարճաւոր (71), մրճաւոր (66), Գկարագործ (142), ողորկաքար (60), քաղաքաւոր (142), օտարայտորթ (51)... Ահա մի քանի բնագրային օրինակներ. «...արիւնարբու, քաղաքաւոր, բերդատապալք» (70): «Յորժամ ոչինչ դամ գտանեմ ուռնաւորք ամենայն եւ մրճաւորք» (66): «Ապա աւտարախորթք էր եւ ոչ որդիք» (51): «... ի պէսպէս նկարագործ անօթոց» (142):

Այս գրքում հանդիպում ենք որովհետեւ բառի շարկապական կիրառութեան: Ժիշտ է, նշում այդ բառով օրինակներ կան, բայց առանց յղումների: Ահա V դարից վկայուած օրինակը. «Եւ որովհե-

տեւ մարմինք արանց սպանելոց եղան իբրեւ զվէմս ի շինածին, պարտ եւ պատշաճ է զի եւ կանայք սուրբք՝ սպանեալք վասն Քրիստոսի՝ մտցեն իբրեւ զվէմս...» (65):

ՆՀԲ-ում ՎԿԱՅՈՒԱՄ ԲԱՌԵՐ

ԱԶԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ - «Ցուցանես աչօք զազդականութիւնն եւ զօրութիւնն, որ իջանէ ընդ քեզ» (56): Ընդգծուածը եւ զօրութիւնը հոռոմէացիներ են:

ԱՆԱՐԱՀԵՏ - «Քննեսցուք զճանապարհս մեր, տեսցուք, զի լցան գայթակղութեամբ, փշաբերք, խոտակիցք, անկոխք եւ անարահետք» (85):

ԱՍՏՃԱԿԵՐ - «Առողջ լինի մարմին պահողացն եւ անարատ եւ անցաւ մարմին աստճակերաց» (86):

ԲԱՆԱԶԱՐԴ - «Զի նովաւ ելին ի գլուխ մարտին եւ նովին հանդիսին առաքինութեան սպանումն է պսակիչ եւ չեն ինչ պիտոյ բազում ճառք բանազարդք» (174):

ԲԵՐԴԱՏԱՊԱԼ - «Նոքա էին սպարապետք, հազարաւորք ... քաղաքաւորք, բերդատապալք, գերիչք» (70):

ԴԱՍԱԿԱԳԵՂ - «Ո՛վ (երինջք) դասակազեղք, որ սիրեցէք զսպանութիւն սալարասուր սրոյն եւ մատեայք պատարագ կատարեալ՝ առանց երկմտութեան» (68):

ԵՐԿԱՆԱԲԵԿ - «Միւս կին առաքինի գլուխն Աբիմելեքեայ սպանողք ջախջախեաց երկանաբեկ, որով եւ սպան» (70):

ԱԲ-ն բառը մեկնում է «երկանով կոտորող, կոտորելով»: Եթէ երկանաբեկի ատորոզ, կոտորելով է երկանաբեկի ատորոզը, կոտորելով է թարգմանել՝ «երկանքի բեկորով» (քարով):

ԹԻԿՆԱԿԱԼ - «Ո՛ւր էին արդեօք գունդք հեծելոց վառելոց ... որ միշտ վերջապահ թիկնակալք էին նոցա ի

թշնամաց» (71): ՆՀԲ-ն ունի թիկնակից եւ թիկնապահ հոմանիշները:

ԸՂԶԻԿՍ ԼԻՆԵԼ - «Աղուէսք ժանտահոտք իւրաքանչիւր դադարաց ըղձիկս լինէին՝ զալ կրծել զանկեալ ոսկերս խաշանցն» (40): Ըղձիկս լինել նշանակում է՝ «ցանկանալ, բաղձել»:

ԽՈՏԱԿԻՑ - «Քննեսցուք զճանապարհս մեր, տեսցուք, զի լցան գայթակղութեամբ, փշաբերք, խոտակիցք, անկոխք, անարահետք» (85): Թերեւս բառը կարելի է ուղղել՝ խոտակից, թէեւ խոտակից ձեւն էլ բացառելի չէ:

ՄԱՌԱՅՈՐԴԻ - «Դուք էք ազատորդիք վերին ազատութեանն, զոր կամեցան հնազանդել ծառայորդիք ներքին ծառայութեանն» (57):

ՄՓԻՉ - «Թափեցաւ ի նոցանէ քունն արիւնքեան եւ սկսան այպանել զժիւղ բազն» (56): Կարելի է ուղղել եւ՝ ծփիմ (որը կայ եւ բառարաններում), բայց -իշ-ձեւով կազմութիւնն էլ խորթ չէ գրաբարին: Այս գրքում կայ եւ սրիշ, որը չկայ ՆՀԲ-ում:

ԿՈՂՄՆԱՌԵԼ - «Սա եւ զՏիգրոնի եպիսկոպոսն՝ յամպարշտութեան եղեալ եւ ոչ դարձեալ՝ անէծ եւ առ ժամայն կողմնառեցաւ եւ զսարկաւազ ոմն ամպարիշտ սպան բանիւ» (3-4): ԱԲ-ն ունի կողմնառել՝ «մէկ կողմը բռնուած» բացատրութիւնը, որն, անշուշտ, այս օրինակին չի յարմարում: Եւ առ ժամայն կողմնառեցաւ, միջանկեալ նախադասութիւն է եւ նախորդ ու յաջորդ մտքերի հետ տրամաբանօրէն չի կապուած: Իսկ եթէ կողմնառել հոմանիշ է դրան, ապա թերեւս կարելի է թարգմանել՝ «մի կողմ քաշուել, հանգստանալ»:

ՀԱՍՏՈՍԿԵՐ - «Անցաւք, հաստակերք, որ ոչ ծնկեցան յանհնարին ցաւս աղեաց» (16): Այլ ձեռագրերում բազարիչները առանձին են: Սակայն բառը









diatessaron անունը, որը ծագում է յուն. τὸ διὰ τεσσάρων εὐαγγέλιον՝ «Աւետարան առ ի չորից»։ Այս Աւետարանի մեկնութիւնը կատարել է Եփրեմ Ասորին, որը եւ հայերէն է թարգմանուել V դարում։ «Միախառնուած» հասկացութիւնից էլ առաջացել է հայերէն համաբարբառ անուանումը (մանրամասն տե՛ս Յ. Անասեան, Հայ համաբարբառային գրականութիւնը եւ հայ մատենագրութեան համաբարբառը, «Էջմիածին», 1971, 1972)։

Նոր բառիմաստներից կարելի է նշել թերեւս ամուսին՝ «հասակակից, զուգակից»։ «Իսկ երիտաճարդքն իբրեւ հառընդարձակութիւն՝ եկին եւ յարեցան ի նա ընկերք ամուսինք իւր, դատարկք եւ վայրահարք...» (181)։ ՆՀԲ-ն բառի այս նշանակութեամբ միայն մէկ օրինակ բերում է Փիլոնից։ Թշնամանները ներքոյիշեալ օրինակում թերեւս ունի «խփել, հարուածել» իմաստը. «Եւ մատեան եւ սկսան քարշել զնա յանինայ. իսկ որ մերձ եւ շուրջ զնովաւ էին, ոմն ոտիւք եւ ոմն ձեռօք թշնամանէին ազգի ազգի թշնամանօք եւ ոչ ակնածէին ի ծերութենէ նորա» (339)։

Եւսեբիոսի «Պատմութեան» լեզուն արժէքաւոր նիւթ կը տայ՝ որպէս միջնորդ լեզուից կատարուած թարգմանութիւն։ Կարելի է բացայայտել յունարէն-ասորերէն-հայերէն հետաքրքիր համապատասխանութիւններ ու տարբերութիւններ։

Ամփոփենք։ V դարում ասորերէնից կատարուած թարգմանութիւնները, լինելով դասական գրաբարի լաւագոյն նմուշներ, մեծարժէք նիւթ են տալիս յատկապէս գրաբարի բառապաշարի մանրակրկիտ ուսումնասիրութեան համար։

Պէտք է արձանագրել, որ առարկայական եւ ոչ առարկայական մի շարք պատճառներով V դարի հայ թարգմանա-

կան գրականութեան լեզուն բաւարար չափով ուսումնասիրուած է։ այնինչ առանց այդ թարգմանութիւնների լեզուի համապարփակ տուեալների հաշուառման, անկասկած, թերի կլինի մեր ոսկեղէնիկ լեզուի իրական պատկերը։ Դոյզն-իսկ չնսեմացնելով V դարի ոչ թարգմանական գործերի լեզուի ճոխութիւնն ու կանոնարկուածութիւնը՝ նկատենք, որ գրաբարի, որպէս գրական լեզուի, ձեւաւորման ու կայացման գործընթացին մեծապէս նպաստել է եւ հայ թարգմանական գրականութիւնը, որի յատկապէս լեզուական քննութիւնը պէտք է լինի հետազոտողների ուշադրութեան կենտրոնում. հրատապ է նաեւ թարգմանական որոշ գործերի քննական բնագրերի կազմման ու հրատարակման պահանջը։

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕԳՏԱԳՐՈՒԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
 ԱԲ – Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վեներտիկ, 1865  
 Ն. Ակիմեան 1932 – Ն. Ակիմեան, Դասական հայերէնը եւ Վիեննական միութարեան դպրոցը, Վիեննա, 1932  
 Արմ – Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. 1-4, Երեւան, 1971-1979  
 Կղնկ. – Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Ադուանից, Երեւան, 1983  
 ՀԱ – Հանդէս Ամսօրեայ  
 ՀԼՊ – Հ. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, հտ. 1-2, Ե. 1940-1951  
 ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1-2, Վեներտիկ, 1936-1937  
 ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդէս  
 Լ. Տէր-Պետրոսեան 1976 – Լ. Տէր-Պետրոսեան, Արքայապետ Խոստովանողի «Վկայք Արեւելիցը», Երեւան, 1976  
 Mariès (1961) – «Hymnes de Saunt Ephrem conservee en version arménienne», text arménien, traduction latin et notes explicatives par Louis Mariès et Ch. Mercuer. «Patrologia Orientalis», t. XXX. fasc 1. Paris 1961.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Ասորերէնից կատարուած մէկ այլ գործի՝ «Նորագիտ Մնացորդաց գրքի» լեզուական իրայատկութիւններից անդրադարձել ենք մէկ

այլ ուսումնասիրութեան մէջ։  
 2 Այս գործը ոչ միայն լեզուական, այլեւ բանասիրական-պատմական կարեւոր սկզբնաղբիւր է, քանի որ խօսքը վերաբերում է Տատիանոսի կազմած համաբարբառին, որը նորութիւն էր՝ թէ՛ որպէս իրողութիւն, թէ՛ որպէս սուրբգրական նոր մեկնաբանութիւն։ Համաբարբառի մեկնութեան թարգմանութեան փաստը առաջադրում է հայե-

րէն համաբարբառի գոյութեան վարկածը, որը եթէ հաւաստուէր, առանկ եւս՝ գտնուէր՝ որեւէ ձեռագրային նմուշ, ապա անշուշտ կը լինէր մեր հնագոյն թարգմանութիւնների լաւագոյն նշխարներից մէկը։  
 3 Հեղինակի աղօթքների գիրքը հրատարակուած է եւ առանձին գրքով (Երուսաղէմ, 1848, 1933)։